Արձանագրություն N 2

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ԿՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք.Երևան, Վրացյան 73,
«Կրթական տեխնոլոգիաների
ազգային կենտրոն» ՊՈԱԿ

21.11.2017թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արտակ Պողոսյանը, հանձնաժողովի անդամներ՝ Արմեն Կուլախսզյանը, Հայկ Թադևոսյանը, Հասմիկ Իփեքչյանը և քարտուղար Լիլիթ Գևորգյանը:

1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

Հայտերը բացվել են հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 11:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին: Հանձնաժողովի նախագահ Ա. Պողոսյանը հրապարակեց գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գները՝ մեկ թվով արտահայտված՝

1	Համակարգիչ	530000 (հինգ հարյուր երեսուն հազար)
2	Կոշտ սկավառակ	564000 (հինգ հարյուր վաթսունչորս հազար)
3	Դյուրակիր համակարգիչ	172000 (մեկ հարյուր յոթանասուներկու հազար)
4	Պլանշետ 1	430000 (չորս հարյուր երեսուն հազար)
5	Պլանշետ 2	828000 (ութ հարյուր քսանութ հազար)

Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

Հանձնաժողովի քարտուղար Լ. Գևորգյանը հայտարարեց, որ հայտ է ներկայացրել երկու մասնակից և հանձնաժողովի նախագահ Ա.Պողոսյանին փոխանցեց հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը.

1/ «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ – հասցեն՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 33-79, հեռ. 010 58 85 81, էլ. փոստ meri@ognakan.am,

2/ «Յունիքոմփ» ՓԲԸ – հասցեն՝ ք. Երևան, Չարենցի 37, հեռ. 010 58 11 11, էլ. փոստ info@unicomp.am:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

«Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ՝

ա/ հայտը պարունակող ծրարը կազմված և ներկայացված է սահմանված կարգին համապատասխան, - ***բավարար***

*բ/ առկա են հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան –****բավարար***

գ/ գնային առաջարկը կազմված և ներկայացված է սահմանված պահանջներին համապատասխան - ***բավարար***

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

«Յունիքոմփ» ՓԲԸ՝

ա/ հայտը պարունակող ծրարը կազմված և ներկայացված է սահմանված կարգին համապատասխան, - ***բավարար***

բ/ առկա են հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան – ***բավարար***

գ/ գնային առաջարկը կազմված և ներկայացված է սահմանված պահանջներին համապատասխան – ***բավարար***

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

1/ «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ՝

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	Գինն ԱԱՀ-ով (դրամ)	Գինն առանց ԱԱՀ (դրամ)
3	Դյուրակիր համակարգիչ	165000 (մեկ հարյուր վաթսունհինգ հազար)	137500 (մեկ հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր)
4	Պլանշետ 1	522500 (հինգ հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր)	435417 (չորս հարյուր երեսունհինգ հազար չորս հարյուր տասնյոթ)

2/ «Յունիքոմփ» ՓԲԸ՝

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	Գինն ԱԱՀ-ով (դրամ)	Գինն առանց ԱԱՀ (դրամ)
1	Համակարգիչ	525000 (հինգ հարյուր քսանհինգ հազար)	437500 (չորս հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր)

4. Հանձնաժողովի նիստը կասեցնելու վերաբերյալ

Քանի որ 4-րդ չափաբաժնի (Պլանշետ 1) համար գնային առաջարկ է ներկայացրել միայն «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ն և ներկայացված գնային առաջարկը գերազանցում է նախատեսված ֆինանսական միջոցների չափը, ուստի, գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5) ենթակետը և «ԿՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.6 կետի գ/ պարբերությունը, որոշեց կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը և ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցին ծանուցել, որ Համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով 4-րդ չափաբաժնի համար գնի նվազեցման վերաբերյալ բանակցությունները տեղի կունենան 2017թ. նոյեմբերի 23-ին ժամը 11:00-ին, «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում, ք. Երևան, Ս.Վրացյան 73 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0:

Հանձնաժողովի նիստը շարունակվեց 2017թ. նոյեմբերի 23-ին ժամը 11:00-ին: «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ն չներկայացրեց նոր գնային առաջարկ:

5. Հայտերը մերժելու վերաբերյալ

- Հանձնաժողովը որոշեց մերժել «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ին 4-րդ չափաբաժինների մասով, քանի որ ներկայացված գինը գերազանցում է նախատեսված ֆինանսական միջոցների չափը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

6. **<u>Մասնակիցների կողմից համապատասխան տեղեր զբաղեցնելու վերաբերյալ</u>**

Հանձնաժողովը որոշեց՝

1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Յունիքոմփ» ՓԲԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0:

3-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0:

7. **<u>Ընթացակարգը 2-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ</u>**

Հանձնաժողովը որոշեց չկայացած հայտարարել ընթացակարգը՝

- 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով («Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ), քանի որ ոչ մի հայտ չի ներկայացվել

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0:

- 4-րդ չափաբաժնի մասով («Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ), քանի որ «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ն էր ներկայացրել հայտ և գինը գերազանցում էր նախատեսված ֆինանսական միջոցների չափը և նոր գնային առաջարկ չներկայացրեց:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0:

8. **<u>Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ</u>**

Հանձնաժողովը որոշեց հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում lilit@ktak.am էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին ներկայացնել «ԿՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով հրավերի (այսուհետ՝ հրավեր) 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է՝ իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հրավերի հավելված N 6.1-ի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0:

9. Տեղեկություններ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում կատարելու վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ համաձայն հրավերի հավելված 8-ի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0:

10. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ԿՏԱԿ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստ հրավիրել առաջին տեղ զբաղեցնող մասնակիցների կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուն և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից համապատասխան եզրակացությունը ստանալուն հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:00-ին, բայց ոչ ուշ, քան 29.11.2017թ. ժամը 11:00, հասցեն՝ ք. Երևան, Ս. Վրացյան 73 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Պողոսյան

անդամներ՝ _____ Ա. Կուլախսզյան

_____ Հ. Թադևոսյան

_____ Հ. Իփեքչյան

քարտուղար՝ _____ Լ. Գևորգյան